

Նահմուտ անձն և ճարտար գրիչն սե-
պուէր . զոր և աշխարհական վիճակէն
չորս օրուան մէջ բարձրացուց 'ի գահ
պատրիարքութեան Կ . Պօլսոյ , յամին
857 . այս էր Փոտ : Ասոր նման և ասկէ
չուտ՝ երկու տարի առաջ այլ 'ի Հայս ,
Զաքարիա՝ իր արժանեաց և գիտու-
թեան համար՝ մի և նոյն օրուան մէջ
յաշխարհական վիճակէն բարձրացաւ
ինչուան 'ի ձեռնադրութիւն կաթողիկո-
սութեան Հայոց . որ և Յովհաննէս Իմաս-
տասիրէն ետև († 728) առաջին մատե-
նագիր և ժողովարար հայրապետ է : Այս
երկու զուգակցաց մէջ՝ որչափ որ Աշտ
վեհագոյն կ'երևի քան զՎասիլ անարատ
քաղաքավարութեամբ , այնպէս Զաքա-
րիա քան զՓոտ . ետքինս գիտութեամբն
անհամեմատ վերագոյն էր քան զմեր
հայրապետն , իսկ խորամանկութեան
գործովքն անհամեմատ վար քան զա-
թոռն՝ յոր նստաւ բռնութեամբ . աւելի
զարմանալին է՝ որ Փոտ ջանաց Հայոց և
Յունաց եկեղեցւոյն միութիւնը հաս-
տատել ուղղափառապէս , յետոյ իր ե-
կեղեցին զատեց ընդհանրական եկե-
ղեցւոյ միութենէն : Յայտնի են բազմաց
իր գործքերն , զոր չի կրցաւ առաջ տա-
նիլ Վասիլի ատեն , որ 'ի թագաւորելն՝
վաճեց զնա յաթոռոյ և դարձուց զՍ .
Իգնատիոս . բայց երբ սա վախճանեցաւ
(878) , Փոտ խորամանկութեամբ շա-
հեցաւ զսիրտ Վասիլի . որ թերևս իր ըս-
պանութեամբ 'ի կայսրութիւն ելնե-
լուն վրայ միշտ վախնալով , կ'ուզէր ե-
ւել քան զեւել համոզել ժողովուրդը իր
օրինաւոր ըլլալուն , մանաւանդ իբրև
Արշակունի ցեղին սերունդ : Այս տկար
կողմը գիտնալով Փոտ՝ հին յունարէն
ձեռագրի մը մէջ քովէն պատմութիւն
մը հնարեց և գրեց հին ձևով հին մա-
գաղթի վրայ , գուշակելով 'ի նմա թէ
Արշակունեաց ցեղէն թագաւոր մը պի-
տի գայ այս ատեն , այս անուն , և այս
բաներս պիտի ընէ , զոր արդէն ըրած
էր Վասիլ . գիրքն այլ անոր գրատան
մէջ մտուց՝ իր մէկ համախոհին ձեռ-
քով , որ և զայն կարդալու և մեկնելու
համար՝ Փոտէն յարմար մարդ չի գրտ .

նուիրն հաւատացուց : Դարձաւ Փոտ
յաքսորանքէն , կարգաց իր մարգարէու-
թիւնը , ինքն իրեն մեկնիչ ըլլալով , ի-
մացուց որ այն գրուածը բոլորովին
յարմար էր Վասիլի , ինքն էր գուշա-
կեալ Արշակունին՝ Հայոց թագաւորաց
ցեղէն , որք պայազատելու ատեն՝ թագը
կ'առնուին Բագրատունեաց նահապե-
տէն . Վասիլ այլ գոհութեամբ կատա-
րեց այս բանս , ինչպէս յետոյ տեսնեմք .
և Փոտ նորէն նստաւ յաթոռ հայրապե-
տութեան , ինչուան որ մեռաւ Վասիլ .
բայց որդին՝ Լևոն Իմաստասէր՝ մէկէն
ձգեց զՓոտ յաթոռոյն , և արսորեց Հայ-
ոց վանք մը , ուր և մեռաւ (894) :

Շարունակի

Հ . Գ . Վ . Ա .

Քաղաքական միաբանութիւնք :

Մարդուս ընական վիճակն է ընկե-
րութիւն , և ոչ թէ առանձնութիւն ըստ
կարծեաց ոմանց . վասն զի մարդս ըն-
կերութեան մէջ կը ծնանի ու կ'ապրի ,
և իր բովանդակ էութիւնը՝ ինչպէս նաև
մտաւորական կեանքը՝ ենթակայ է 'ի
բնէ ընկերական հանդամանաց ազդե-
ցութեան :

Շնչաւոր արարածոց մէջ մարդս 'ի
ծննդեան ամենէն սկարն է և իր կարօ-
տութիւնն հոգալու անկարող : Բաւա-
կան ժամանակ անզօր է ինքզինքը
պաշտպանելու և խնամելու , և բովան-
դակ իր ապագայն ծնողացը սիրալիր
խնամոցը վրայ հաստատուած է . որով
ընտանեկան զգացմունքը յարբունս հա-
սեալ մարդուն վրայ՝ ընական դուռն է
քաղաքական ընկերութեանց :

Իսկ որովհետև անկարելի է մարդ-
կային ընկերութիւն մը ենթադրել ա-
ռանց ենթադրելու անոր առանձինն
անդամոց յարաբերութիւնն իրարու
հետ և բովանդակ ընկերութեան մար-

մնայն հետ, առանց ենթադրելու միանգամայն կազմութիւն մը ձև մը այս յարաբերութեանց մէջ. ուրեմն ընկերական վիճակի և վարչութեան գաղափարը անխզելի և անբաժանելի կերպով միացեալ է 'ի ներքուստ մարդկութեան հետ: Ուրեմն ընդունելի չէ անոնց դատաստանը որ ընկերական միաւորութիւնները իբրև մտացածին գիւտ մը կը սեպեն, և իբրև հետեանք զիպուածական միութեան և դաշնագրութեան՝ 'ի սկզբանէ և 'ի բնէ առանձնակեաց անձանց մէջ:

Յայտնի է թէ նախ ընտանիքն եղաւ մարդկանց իրարու մէջ ունեցած յարաբերութեանցը առաջին ձև տուողը: Ազգատոհմ մը իր հօրը կառավարութեանը տակ հետզհետէ ցեղ ցեղ կ'աճի, որոնց վրայ գլուխ կան ծեր մը, նահապետ մը, և իրեն կը հնազանդին ընտանեաց այլ և այլ հայրերը, որոնց իւրաքանչիւրը կը կառավարէ և կը հրամայէ իր սահմանին մէջ. ահաւասիկ նահապետական ցեղի (tribù) կամ կենաց բովանդակ նկարագիրը, զոր պէտք է իբրև մարդկութեան մանկութեան զարը սեպել, որ նախ և առաջ պատմութեան նախագաւիթին մէջ առջևնիս կ'ելլէ:

Քաղաքական ընկերութիւնը և վարչութեան գաղափարը բուն Ասիոյ և հիւսիսային Ափրիկոյ աստուածպետական տեսչութեամբը (teocrazia) կը սկսին, ուր որ բնականապէս աւելի խոնուած էին մարդիկ, և ժողովուրդը կարգէ զուրս շատնալով՝ ամէնքը չէին կրնար թափառական կեանք անցընել. կամ թէ ան տեղերուն գեղեցկութիւնն ու արդաստարութիւնը կը հրաւիրէին ըզմարդիկ իրենց բնակութիւնն հոն տեղուանք հաստատելու, և կամ այլ և այլ ցեղեր ուրիշ ցեղերէ յաղթուելով ու հալածուելով այնպիսի տեղեր կու գային կը հաստատուէին, որ յարձակող թափառական ցեղերու գժուարամատոյց էին:

Երկրին կերպարանքը մեծ ազդեցութիւն ունէր մարդու վիճակին և զար-

գացմանը վրայ: Գաւառաց և հովտաց ջրարաշխական բաժանմունքը ամենամեծ ազդեցութիւն ունեցող հանգամանքներէն մէկն է, և գետերն մարդկանց միութեանը կապն են, այն կենդանացուցիչ տարերքով, յորում են գոգցես ապագային բողբոջները: Այսպէս ահա Եգիպտացուց հին և զարգացեալ ազգն՝ ունէր Նեղոսին հարուստ ու օգտակար հոսանքը, և Բաբելոնիք՝ Եփրատինը. ինչպէս նաև Փիւնիկեցուց համար ալ մեծ շահ էր ծովուն մօտ ըլլալնին. նաև Հնդկաստանի ու Չինաստանի բեղնաւոր և յորդութեամբ առողուած երկիրներն ալ կ'օգնէին այս ազգերուն զարգացմանը:

Կ'երևնայ թէ յետ ջրհեղեղին նախկին բնակատեղիք ժողովրդոց և զարգացման էին 'ի ստորև Եփրատայ և Տիգրիսի եղած երկիրները, այսինքն այն ընդարձակածաւալ հովտին ամենէն աւելի բարձր մասնն և սահմանակից սարահարթերը: Առաջին օրինակ է քաղաքական միութեան Սենաարայ երկիրն իր աշտարակովը, և Բաբելոնի հին ինքնակալութիւնը. և Բաբելոն քաղաքը Քրիստոսի թուականէն քսանուերկու դար առաջ մարդկան բնակութեան առաջին հաստատուն կայանքն էր, ուսկից Գուշի ցեղը կ'երթար մարդ և անասուն որսալու, և կը բերէր իւր պարբապացը ներքև կը մուծանէր զանոնք:

Ասորա – բաբելական ինքնակալութիւնը, որուն վրայօք կը խօսին Ս. Գիրք, առաջինն է քաղաքական միաւորութեանց պատմութեան մէջ. և կը սկսի ներքովթէն և կը վերջանայ Սարդանաբային սպաննուելովը, և կը բաժնուի Ասորեստանեայց, Բաբելացուց և Մարաց իրեք պետութեանց մէջ, եօթն ու կէս դար յառաջ քան զՔրիստոսանոնք ալ Պարսից նոր իշխանութեամբը կ'ընկճուին ու կը թաղուին ամէնքն ալ այն մեծատարած ինքնակալութեան մէջ, որ կիւրոսի սակաւագիւտ ճրիւքն ու կատարելութեամբքը ծնաւ վեցերորդ դարուն առաջին կէսին մէջ:

Բայց այս ինքնակալութիւնս և ևս

ընդարձակուելով կիրոսի անմիջական յաջորդներուն ժամանակ, և յետոյ տրկարանալով այնպիսի թագաւորաց կառավարութեան ատեն՝ որոնք դժբաղդարար հեռացեալ էին իրենց նախնեաց առաքինութենէն, չկրցաւ դէմ դնել Մեծին Աղեքսանդրի ահեղ հարուածոյն: Խեղճ Դարեհ Գ., քաջասիրտն և ազնուասիրտ՝ ընկճուեցաւ, օգնութիւն չկարենալով գտնել թոյլ զօրքերէն, և իր հետը դադրեցաւ ասիական հին ինքնակալութեանց վերջինը, որ կը պարունակէր յինքեան Ասիոյ հնոց ծանօթ եղող ամենայն մասը:

Աղեքսանդրի ինքնակալութիւնն ալ՝ որ առաջին եւրոպական պետութիւնն է, զինքը հիմնողին կարճ կեանքէն աւելի չտեսց, և իրմէ ձեւացան Պարթեւաց, Ասորոց և Եգիպտացոց պետութիւնները, որոնցմէ երկու վերջինները Հռովմայեցոց կառավարութեան տակ ինկան:

Իտալիոյ գեղեցիկ գաւառները կլիմային անուշութեամբն և երկրին բեղնաւորութեամբը և ծովեզերաց ընդարձակ տարածութեամբն, յորս նաւարկելը դիւրին էր, ամենահին ժամանակներէ ՚ի վեր, ոչինչ ընդհատ քան զՅունաստան, հզօր հրապոյրք մ'եղան գալթականութեանց ժողովրդոց: Հոս Տիրերիսի գետափանցը վրայ և աղբիւրէն քիչ հեռու, կը կանգնուէր 753ին խեղճ ու անշուք քաղաք մը, որ աննման փառաց և թշուառութեանց սահմանեալ էր: Իր խոնարհ բունէն՝ Հռովմայ արծիւն կը սաւառնէր գրեթէ յայն ամենայն աշխարհ՝ որ ծանօթ էին հընոց և հռոմէական ինքնակալութիւնը վերջինն եղաւ հին դարուն, մանաւանդ թէ ինքն եղաւ սրատճառ մեղի նոր դարն անցնելու: Երկու բաժնուելով արևմտեանն ինկաւ հիւսիսային արշաւանաց ուժոյն տակ, երբ արևելեանն գեռ գրեթէ 10 դար կը դիմանար:

Երբ Մահմէտի յաջորդները նոր կրօնքով կը տարածէին իրենց իշխանութիւնը հին աշխարհքին մեծ մասին մէջ, կարծես թէ Եւրոպա խոնարհեցաւ

Ասիոյ քաղաքական առաւելութեանցն առջև: Պաղատաւ և ֆորտովա քաղաքներուն մէջ կը ծաղկէին արուեստը, գիտութիւնը և գրականութիւնը. և Արաբացիք իրենց քաղաքականութեանն անկորուստ հետքերը կը թողուին:

Ռութերոգ դարուն վերջերը Արևմտեան կայսրութիւնը նորէն կանգնուեցաւ Մեծին կարողութիւնով: Ան ատեն իրեք մեծագօր իշխանութիւնք կային. Ֆրանկաց պետութիւնը, Արևելեան հռոմէական կայսրութիւնը, և Խալիֆայից իշխանութիւնը:

Դիտելու արժանի է նաև որ Միջին Ասիոյ տեղ տեղ չոր, տեղ տեղ ալ կանաչազարդ ընդարձակածաւալ դաշտերուն մէջ, ուսկից եկան այն ժողովուրդքն որ առաջին ուժերնին արշաւանաց տուին և կործանեցին հռոմէական պետութիւնը, ծագեցաւ դարձեալ երկրտասաներոգ դարուն սկիզբները լայնասփիւռ պետութիւն մը, որ Խալիֆայից իշխանութեանը վերջին հարուածն եղաւ: Այն անթիւ թափառական հովուաց ցեղերէն՝ որ շարժական հիւղերով կը բնակէին խորին առանձնութեան մէջ, այն ձիաւորեալ ազգերէն երան ձինկիզխան, ֆուլիլխան և Լէնկթիմուր, որոնք իբրև կայծակն պատերազմի աւերեցին և ընկճեցին հին աշխարհքին մեծ մասը:

Մահմէտականութիւնը գրեթէ մօտ կ'երևար իր վախճանին, բայց Մոնկոլաց պետութեան դուրս յարձակմամբը, Տաճիկք նորէն երկրակալութիւն ընել սկսան: Փոքր Ասիոյ ծովեզերքէն անցան յԵւրոպա և կանգնեցին իրենց դրօշները Բիւզանդիոյ աշտարակաց վրայ:...

Միջին դարու մեծ պետութեանց մէջ վերջինը, մանաւանդ թէ անիկայ որ կը կնքէ նոյն շրջանը՝ է կարողոս հինգերորդինը, որ Հապապուրկի տան իշխանութիւնը շատ տարածեց Եւրոպայի մէջ, և երկու Ամերիկայից գաւառներուն մէջ, որոնց այլ և այլ մասանց գիտին ետևէ կ'ըլլային Գոլոմպոսի հետևողքը:...

Աչք մը տալով արդի պետութեանց վրայ ալ, կը տեսնենք որ այլ և այլ ժողովուրդք երկրի՝ զանազան խումբեր ձևացած են, զոր ըստ երևելի աշխարհագրիտի մը կրնանք ըսել դրուժինք պետութեանց։ Այս դրութեանց ծագման սկզբնապատճառն է ժողովրդոց կրօնական զգացմունքը. որով միոյն միւսէն ունեցած տարբերութիւնը կը կայանայ միայն այլ և այլ կերպով ճանչնալուն և պաշտելուն մէջ զէն գերագոյն. և որովհետեւ այս զգացմունքներս մէկ կողմանէ արգասիք են մտաւորական զարգացման, և միւս կողմանէ ոյժ մը կանոնաւորիչ բարոյական հանգամանաց, ուրեմն հետեւաբար տէրութեանց այս զանազան դրութիւնները յայտնի նշան են այլ և այլ աստիճանի քաղաքականութեան։

Այս նախնական դրութիւնքն՝ որով երկրիս ժողովուրդը կը բաժնուի, են քրիստոնէութիւն, Մահմէտականութիւն և Պուտտեան դրութիւն։

Քրիստոնէական պետութեանց դրութեան մէջ կը բովանդակուին ամենայն պետութիւնք Եւրոպիոյ, բաց 'ի միոյն. ինչպէս նաև Նոր աշխարհքին տէրութիւններն ալ. ուստի երկու կը բաժնուի՝ եւրոպական և ամերիկեան, և վերջինը առաջնոյն պարտական է իրեն ծագումնը։

Ովկիանոսը կը զատէ մի և նոյն դրութեան այս երկու բաժանմունքը, որոնք անձուկ կապերով միացեալ են և կը յառաջադիմեն նոյն բարոյականի ճամբով և մտաւորական զարգացմամբ. թէպէտ այս բաժանմանց առանձնական անդամներուն զարգացման չափը այլ և այլ է։

Եւրոպական պետութեանց բաժանմունքը աշխարհքիս ուրիշ կողմերն ալ տարածուած է, նոյն իսկ Ամերիկայի երկու մասին մէջ, որով Նոր աշխարհքին պետութեանց հետ բաց 'ի սկզբանց հաղորդակցութենէն, նիւթական հաղորդակցութիւն մ'ալ կայ։

Մանմէտականութեան դրութեան մէջ կը բովանդակուին արևմտեան Ա-

սիոյ պետութիւնները և հիւսիսային Ափրիկէի քաղաքական միաբանութիւնները. ասոնցմէ մէկը մայրաքաղաքովն և երկրին մէկ մասովն Եւրոպայի կը վերաբերի (Օսմանեան պետութիւնը)։ Ասիկայ ալ ուրեմն մէկտեղ առնելով, որ նոյն դրութիւնն ունեցող պետութեանց մէջ ամենէն զօրաւորն է, իրենց ազդեցութիւնը Եւրոպայի մէջ Ադրիականին եզերքներէն սկսեալ կը տարածուի չուան Երկնային կայսրութիւնն և Հիմալայա լեռները՝ Սրենդեան Ասիոյ մէջ։

Կրնանք նաև զասոնք ալ երկու բաժնել Եւրոպ-Ասիական և Ափրիկեան, միացեալ միով յօդուք կրօնի. բայց մտաց ամենէն ազնուական նշաններուն մէջ քրիստոնեայ տէրութիւններէն շատ ստորին են. թէպէտ միջին դարու մէջ այս դրութիւնս ունեցող պետութիւնք շատ բարգաւաճեցին բաւական ժամանակ 'ի քաղաքականութեան։

Պուտտեան դրութիւնն ունեցող պետութիւններն են 'ի ներքին և յարեւելեանն Ասիա, և հարաւային Ասիոյ մէկ մասին մէջ։ Այս պետութեանց բարոյական և մտաւորական վիճակը առհասարակ շատ ստորին է քան զքրիստոնեայ պետութեանցը, և նաև քան զմահմէտական պետութեանց։ Բայց եւրոպական քաղաքականութիւնն ու գաղափարներն ամենայն կողմանէ կ'ընկճեն զիրենք, և թերևս շատ հեռու չէ այն ժամանակը որ այս պետութիւններն ալ՝ որոնք անսահման երկիրներու մէջ տարածուած են, գան պիտի միանան անձուկ զօգիւ ընդ եւրոպական և քրիստոնէական աշխարհի զարգացման։

Բաց 'ի նախասացեալ երեք դրութիւններնէս կը գտնուին այլ և այլ ժողովք վայրենի և բարբարոս ժողովրդոց յԱփրիկէ, մանաւանդ յՈվկիանիա, և այլ և այլ նկատմամբ նաև յԱմերիկա։ Բայց ասոնք ամենեին ազդեցութիւն չունին մարդկութեան վիճակին վրայ, և շատ հեռի են այն փոփոխակի ազդեցութիւններէն և այն մեծամեծ նշաններէն՝ որով անուանի են վերոյիշեալ ժողովուրդները։

Պէտք է գիտնալ նաև որ քրիստոնէայ ազգաց դրութիւնը յերկուս բաժանեալ՝ այսինքն եւրոպական և ամերիկեան, դեռ աւելի մանրամասն բաժանմունքներ կը ձևացնէ քաղաքական մարմնոց՝ յորոց կը կազմուի, եթէ մտածենք անոնց այլ և այլ ազգութիւնները. ինչպէս են սլաւեան, գերմանական, յունա-լատինական և թաթարական ցեղերը Եւրոպայի մէջ, յորս կրնան բաժնուիլ ամենայն տէրութիւնք Եւրոպիոյ. գերմանական և յունա-լատինական ցեղերը նաև Ամերիկայի երկու մասին մէջ ալ կան:

Քաղաքական այլ և այլ հանգամանաց պատճառաւ հարկ կ'ըլլայ այս դասաւորութիւններն ալ զանազանել. նախ յատկապէս Պետոռքիւն կամ Գերագոյն պետոռքիւն ըստածները, որ նաև Տէրութիւնք ալ կ'ըսուին. ասոնք կառավարութեան մէջ ինչ ձևի մէջ ալ ըլլան չեն ճանչնար ամենեին օտար իշխանութիւն մը իրենց իրաւունքը բանեցրնելուն մէջ. երկրորդ կէս ինքնիշխան Տէրոռքիւններ, որոնց գերագոյն իշխանութիւնը աւելի կամ նուազ կերպով չափաւորուած է իրենց իրաւունքները բանեցրնելուն մէջ, երբեմն հարկատու ըլլալով, երբեմն հպատակ, և երբեմն ալ մէկ տէրութեան կամ այլ և այլ տէրութեանց պաշտպանութեանը տակ գտնուելով: Առջի դասաւորութեան մէջ են Անգղիական միապետութիւնը, և այլն. Գաղղիական, Ռուսիոյ և Աւստրիական կայսրութիւնները, և այլն. Սարտենիոյ և Շուեթի թագաւորութիւնները, և այլն. Մեխիգոյի և Չիլիի հասարակապետութիւնները, և այլն: Երկրորդին կը վերաբերին Սերվիայի և Վալաքիոյ իշխանութիւնները, և այլն. Գունուզի կառավարութիւնը, և այլն. Յունիական կղզեաց հասարակապետութիւնը, և այլն, և այլն:

Շատ կերպ կառավարութիւն կայ: Գերագոյն իշխանութեան՝ քաղաքական ընկերութեան բոլոր անդամներուն ձեռքն ըլլալէն սկսեալ, ինչուան բոլորովին մէկու մը ձեռք անցնիլը կամ գտնուիլը:

Միապետական կառավարոռքիւն կ'ըսուի երբ անոր գերագոյն իշխանութիւնը մէկու մը յանձնուած է, ունեցած աստիճանն ինչ ալ ըլլայ: Երբ ինքը մասնաւոր օրինաց տակ չէ, և կըրնայ ըստ իւր կամաց կարգաւորութիւններ ընել իր հպատակացը ազատութեանը, ստացուածոցն և կենացը վրայ, ան ատեն կառավարութիւնը կ'ըսուի ինքնիշխան (despotico). այսպէս են Ասիոյ, Ափրիկէի և Ովկիանիայի կառավարութիւնները: Բացարձակ միապետոռքիւն կ'ըսուի այն ամենայն կառավարութիւն՝ որուն գլխաւորը իրաւունք ունի օրէնք դնելու ըստ իւր կամացը, առանց օրինադրութիւն (istituzione) մը իր իշխանութիւնը չափաւորելու: Վերջապէս սահմանադրական միապետոռքիւն կը կոչուի կառավարութիւնն երբ գլխաւորը չկրնար օրէնք դնել առանց ազգին գլխաւոր ներկայացրնողներուն գործակցութեանը: Այս առանձնաշնորհութիւնն ունեցող անձինքը կը կազմեն այն ժողովքներն որ կ'ըսուին Ազգային ժողով Շուեթի մէջ, Խորհրդարան՝ Անգղիոյ մէջ, և այլն:

Հասարակապետական կառավարոռքիւնն է երբ գերագոյն իշխանութիւնը միայն գլխաւոր քաղաքացեաց ձեռքն է, կամ ազգին ամենայն անհատին ձեռքը: Առջի կերպին մէջ կ'ըսուի սզնոռքապետական, երկրորդին մէջ ռաւկապետական:

Շատ անգամ նաև սեպհականութեան իրաւունք (proprietà) պատճառեալ ստորակարգութիւն (subordinamento) մը կ'ըլլայ իշխանութեանց և դասակարգութիւն մը հպատակութեան մէջ: Ժառանգական գերագահութիւն մը կը հաստատուի այլ և այլ պայմաններով շնորհուած կալուածներու տէրերուն վրայ: Անանկ որ աս դրութեամբս ատենօք կալուածապետի մը իշխանութիւնը շատ անգամ աւելի մեծ էր այն կալուածատէրերուն վրայ, որոնք իրենց ստացուածքը իր մէկ կամ իրեն նախնեացմէ ընդունած էին, քան թէ նոյն իսկ տէրութեան

գլխավորին իշխանութիւնը . աս դրու-
թիւնս կ'ըսուի կայունաճապետական
կառավարութիւն , որ միջին դարու մէջ
գրեթէ բոլոր Եւրոպայի կառավարու-
թիւնն էր , և դեռ քանի մը տեղ կը
գտնուի . ասով կը կառավարուին ամե-
նայն անբաղաբականացեալ ժողովուրդք
և Ովկիանիայի վայրենի ժողովուրդները ,
ինչպէս նաև Ափրիկէիներն ու Ասիայ-
իները :

Այս ամէն յիշատակած պետութիւն-
նիս ըստ իրենց տէրութեանն , ըստ կա-
ռավարութեան կերպին և ըստ անուան
իրենց գլխոյն , կ'ըսուին կայսրութիւն ,
միապետութիւն , քագաշորութիւն , մեծ
դքսութիւն , դքսութիւն , իշխանու-
թիւն , կոմսութիւն , շանտկրաւորու-
թիւն , իւսկոմսութիւն , իւսկոմսութիւն , շե-
րիֆութիւն , հասարակապետութիւն ,
դաշնակցութիւն , և այլն , և այլն :

Վերջիններուն նկատմամբ պէտք է
գիտնալ որ հասարակապետութիւնն
այլ և այլ անուններ ունի . ինչպէս
կառնակ , վիճակ , ազատ քաղաք , և
այլն :

Դաշնակցութեան դրոշմները միու-
թիւն մ'է այլ և այլ անկախ նահանգաց

իրենցմէ ընտրուած գերագոյն գլխոյ մը
տակ , որ աւելի կամ նուազ իշխանու-
թիւն ունի հասարակաց կարգը պահե-
լու և արտաքին թշնամեաց դէմ պաշտ-
պանելու զիրենք :

Դաշնակցութեան դրութեան մէջ
հարկ է զանազանել Դաշնաշորեայ Տե-
րութիւնը (Stato federale) և Տէրու-
թեանց դաշնակցութիւնը (Confedera-
zione di Stati) . Միացեալ նահանգնե-
րը հիւս . Ամերիկոյ մէջ թերևս առա-
ջին կերպին օրինակն են , որուն նմանու-
թեամբ ձևացան Ռիոյ տէ լա Բլադայի
և Ամերիկոյ այլ և այլ դաշնակցութիւն-
ները : Պէտք է այս կարգիս մէջ սեպել
նաև Չուիցերիոյ դաշնակցութիւնն ալ ,
որուն ժազումը հին է : Գերմանական
դաշնակցութիւնն երկրորդ տեսակին
օրինակն է , այսինքն Տէրութեանց Դաշ-
նակցութիւնն ըսուածին . այս երկու
տեսակ Դաշնակցութիւններն կազմող
զանազան մասերը շատ այլ և այլ կերպ
կառավարութիւն կրնան ունենալ :

ԵՒԳԵՆԻՍ ՊԱԼՊԻ

Գ Ա Ր Ո Ւ Ն

Գ Ե Ղ Օ Ն Ք

Յօդ եւ 'ի ջուր եւ ընդ երկիր զեղու սեր .
ԲԵՒՐԱՐԳԱ

Հովիւ մի

Ո՛վ դու պարարտ հօտի խաշանցդ հովուուհի ,
Եթէ այսրէն ըստ զիպուածոյ ինչ տեսեր
Չանցս ընթացից փախուցելոյ երընջի :

Իբր ըզմաշեալ լուսնի բերէ ըզպատկեր
Ուլանըն գեղ , իսկ դոյն մորթոյն ըսպիտակ ,
Բայց ունելով լոկ թոյրաթուխ նիշ յազգեր :